

# ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

01.04.2020թ.

### ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

**«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՒՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ»**

**ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. **Նախագծով «փոխկապակցված անձ» և «երրորդ անձ» եզրույթների անհամաչափորեն տարածական սահմանումը, գույքի բռնագանձման խիստ ռեժիմը և որպես արդյունք բարեխիղճ ձեռք բերողի ինստիտուտի ձևախեղումը**

1.1 **Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ փոխկապակցված անձ է համարվում նաև ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ում տվյալ անձն անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով փոխանցել է գույք:**

Նախագծով «փոխկապակցված անձ» եզրույթը սահմանվել է՝ հիմք ընդունելով հիմնականում գործող օրենսդրությամբ այդ հասկացությանը տրված ձևակերպումները, սակայն միաժամանակ ընդլայնվել է հասցեատեր սուբյեկտների շրջանակը՝ ի դեմս գույքն օտարող անձի կոնտրագենտների՝ գնորդների, վարձակալների, նվիրառուների, ում կողմից Նախագծի իմաստով ուսումնասիրության ներքո գտնվող անձից ձեռք բերված գույքը ևս կարող է բռնագանձվել:

Ընդ որում, փոխկապակցված անձի և երրորդ անձի միջև դրվել է այն տարբերակումը, որ փոխկապակցված անձի պարագայում վերջինիս կողմից ձեռք բերված գույքը կարող է բռնագանձվել, եթե ձեռք է բերվել շուկայականից էական ցածր գնով:

Փոխկապակցված անձանց համար սահմանված չէ որևէ նյութական-իրավական կամ ընթացակարգային պաշտպանության երաշխիք:

Այս մասով երկու խումբ է առանձնանում՝ 1. Փոխկապակցված անձ, որը գույքը գնել է շուկայականից ցածր գնով: Այս խմբում կարող է հայտնվել ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը ցածր արժեքով իրական գործարք է կատարել, բայց տարբեր հանգամանքներից ելնելով Վաճառողի կամ Գնորդի ցանկությամբ գործարքի ցածր գին է նշել: 2. Իրավաբանական անձինք, որում Օրենքի իմաստով հանցագործություն կատարած անձը ունի 10% մասնաբաժին կամ բաժնետոմս: Երկու դեպքերում էլ Օրենքում հաշվի չեն առնվում, որ իրական գործարքները կարող են կնքված լինել շուկայականից ցածր արժեքով կամ իրավաբանական անձի 90 տոկոս մասնակիցները չգիտեին և չէին կարող իմանալ ընկերության 10 տոկոս բաժնեմասի ապօրինի ծագման մասին:

Ըստ էության, միայն գույքը ցածր արժեքով գնելու փաստով գործարքը համարվում է կեղծ կամ շինծու, այսինքն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306 հոդվածով սահմանված չափանիշները լրացվում են նոր, ավելի խիստ չափանիշով:

Օրինակներ, որոնք Օրենքի շրջանակներում, մեր կարծիքով, կարգավորված չեն՝

- Անձը ձեռք է բերել ցածր արժեքով ապօրինի ծագում ունեցող գույք և հետագայում կրկին վերավաճառել է այն ցածր արժեքով: Եթե գույքը անընդհատ տարբեր սեփականատերեր է ունեցել, որոնք բոլորը շուկայական գնից ցածր արժեքով են ձեռք բերել գույքը, ապա Օրենքի իմաստով բոլորը կարող են համարվել փոխկապակցված անձ:

- Անձը ձեռք է բերել իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում շուկայականից ցածր արժեքով 90 տոկոս բաժնեմաս, գործարքը իրական է, նշված անձը չգիտեր գույքի ապօրինի ծագման մասին, սակայն, կրկին Օրենքի իմաստով համարվում է փոխկապակցված անձ:

- Իրաբանական անձի բաժնեմասի ձեռք բերման շուկայական արժեքի ցածր կամ բարձր լինելու չափանիշը նախագծում տրված ընդհանուր կարգավորումներով հնարավոր չէ որոշել: Բաժնեմասը, որի վերաբերյալ գործարք է կատարվել 10 տարի առաջ, եթե իրավաբանական անձը չի ունեցել նյութական ակտիվներ այլ իրավաբանական անձին պատկանել է հանքի շահագործման լիցենզիա կամ այլ ոչ նյութական ակտիվ, ապա գործնականում այդ բաժնեմասի

արժեքի գնահատման հստակ մեխանիզմներ չկան: Կարծում ենք, որ օրենքում ընդհանրապես փոխկապակցված անձի հասկացության շրջանակներում իրավաբանական անձանց բաժնեմասի շուկայական արժեքի որոշման մեխանիզմները կարգավորված չեն:

- Կառուցապատման ոլորտում, եթե շենք կառուցող իրավաբանական անձը օրենքի իմաստով համարվի փոխկապակցված, կստացվի, որ բնակարանների բոլոր գնորդները, որոնք շուկայականից ցածր գնով են ձեռք բերել բնակարանները, նույնպես համարվում են փոխկապակցված անձիք: Համատարած բոլոր կառուցապատողները, որոնք, այս կամ այն կերպ, փոխկապակցված են եղել կոռուպցիոն սխեմաների հետ, հնարավորություն են ունեցել հարկերից խուսափելու նպատակով օտարել անշարժ գույքը շուկայականից ցածր գնով իրական գնորդներին:

- Ցանկացած գյուղատնտեսական նշանակության հողամաս, տեսականորեն սեփականաշնորհվում էր գյուղապետի կամ մերձավոր հարազատների կողմից, հետագայում օտարվում իրական գնորդի, ներդրողի և որպես կանոն, աճուրդի գնից չտարբերվելու համար, վաճառողի պնդմամբ գործարքի գինը ցածր էր նշվում:

Հայաստանում իրականացվող գործարքների նախորդ տարիների փորձից ելնելով կարող ենք նշել, որ հիմնականում, տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներից ելնելով գործարքների գները շուկայականից էականորեն ցածր են նշվել:

Գտնում ենք, որ օրենքն ուժի մեջ մտնելուց առաջ անհատույց կամ հատուցելի գործարքով գույքի իրական ձեռք բերողը, ով ընտանիքի անդամ չէ և այլ հիմքերով փոխկապակցված չէ, սակայն շարունակել է որպես իրական շահառու և սեփականատեր տնօրինել գույքը, պետք է ազատվի ցանկացած պատասխանատվությունից: Եթե հիմնավորումն այն է, որ որոշվում է գույքի ծավալը, ամեն դեպքում ցանկալի է բարեխիղճ իրական գնորդին չանվանել փոխկապակցված անձ և այլ կերպ բնորոշել գույքի ծավալը՝ անկախ նրանից, թե իրական գնորդը օրենքը ընդունելուց առաջ ինչ գնով է ձեռք բերել գույքը: Ինչ վերաբերում է օրենքը ընդունելուց հետո ժամանակահատվածին, ապա համաձայն ենք, որ այս դեպքում,

երբ իրական գնորդը տեղեկացված է օրենքի մասին, սխալ որոշում չկայացնի և անհատույց կամ ցածր գնով ձեռք չբերի գույքը:

Բացի այդ, հիմնավոր կլինի նաև փոխկապակցված անձանց վրա տարածել երրորդ անձանց համար Նախագծով նախատեսված պաշտպանության միջոցները, քանի որ որոշակի առանձնահատկություններով հանդերձ՝ բարեխիղճ գործելու պարագայում փոխկապակցված անձինք և երրորդ անձինք գույքի ձեռքբերման գործարք կնքելիս հանդես են գալիս որպես բարեխիղճ կոնտրագենտներ, և պարզ չէ, թե ինչու երրորդ անձինք Նախագծով պետք է ունենան պաշտպանություն, իսկ փոխկապակցված անձինք՝ ոչ:

Ընդ որում, սույն համատեքստում հարկ է հաշվի առնել նաև սույն տեղեկանքի 1.2 ենթակետում տեղ գտած վերլուծությունը՝ Նախագծի իմաստով երրորդ անձի իրավական կարգավիճակի և պաշտպանվածության վերաբերյալ՝ ավելացնելով նաև փոխկապակցված անձի՝ գործարքի իրական շահառու լինելու չափանիշը:

Առնվազն առաջարկվող գործիքակազմով հնարավոր կլինի որոշակիորեն պաշտպանել այն փոխկապակցված անձանց, ովքեր գույքը ձեռք բերելիս ունեցել են վարքագծի բարեխիղճ շարժառիթներ և ոչ իրավաչափ սխեմաների մասնակից չեն եղել:

## 1.2 **Նախագծի 23-րդ հոդվածի համաձայն՝**

*1. Երրորդ անձի կողմից ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքը ենթակա չէ բռնագանձման, եթե վերջինս ապացուցում է, որ.*

*1) գույքը ձեռք բերելու պահին չգիտեր և ողջամտորեն չէր կարող իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին, և*

*2) գույքի դիմաց հատուցումն իրականացվել է օրինական եկամուտների օգտագործմամբ:*

*2. Գույքը ենթակա չէ բռնագանձման նաև այն դեպքում, եթե անձը ապացուցում է, որ գույքը ձեռք բերելու պահին չգիտեր եւ ողջամտորեն չէր կարող իմանալ գույքի՝*

ապօրինի ծագում ունենալու մասին եւ գույքը փոխանցվել է նրան որպես կյանքին ու առողջությանը պատճառված վնասի հատուցում, ալիմենտ կամ տրամադրվել է նրան բարեգործական նպատակներով:

3. Բացառությամբ սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված անձանցից (բարեխիղճ ձեռք բերողներ) այլ անձի կողմից ապօրինի ծագում ունեցող գույքի օտարման գործարքները համարվում են առոչինչ: Այդ գործարքների առնչությամբ իրավասու մարմինը գույքի բռնագանձման պահանջի ներկայացման հետ միասին դատարանին խնդրում է կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետեւանքներ:

Նախագծով պատշաճ երաշխիքներ նախատեսված չեն՝ պաշտպանելու բարեխիղճ ձեռք բերողների շահերը, ովքեր չգիտեին և պարտավոր չէին իմանալ գույքի ապօրինի ծագման մասին: Ավելին՝ ձեռք բերողների շահերը նաև այնքանով պաշտպանված չեն, որ անգամ գործող օրենսդրության իմաստով բարեխիղճ լինելով հանդերձ՝ նրանք ևս պարտավոր են ապացուցել իրենց եկամուտների իրավաչափությունը՝ Նախագծի իմաստով, հակառակ պարագայում նրանցից գույքը ենթակա է բռնագանձման:

Նախագծի 23-րդ հոդվածի 2-րդ մասով բարեխիղճ ձեռք բերողի համար սահմանված դրական բացառությունները կրում են սահմանափակ բնույթ և գործնականում ունեն կիրառման նեղ շրջանակ:

Կարելի է եզրահանգել, որ բարեխիղճ ձեռք բերողի ինստիտուտի մասով Նախագծում տեղ գտած իրավակարգավորումները չեն համապատասխանում ՀՀ գործող օրենսդրությանը:

Այսպես՝ **Քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՔՕ) 275-րդ հոդվածի համաձայն՝**

1. Եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր և չէր կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը,

ում այդ գույքի սեփականատերերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից:

2. Եթե գույքն անհատույց է ձեռք բերվել այն օտարելու իրավունք չունեցող անձից, ապա սեփականատերերը բոլոր դեպքերում իրավունք ունի հետ պահանջել այդ գույքը:

(...)

Քաղաքացիական օրենսգրքի նշյալ դրույթները կարող ենք վերլուծել հետևյալ կերպ:

ա. Գույքը ենթադրյալ ոչ բարեխիղճ ձեռք բերողից բռնագանձելու պահանջ ներկայացնելու իրավունք ունի միայն այդ գույքի օրինական սեփականատերը:

բ. Անձը համարվում է բարեխիղճ ձեռք բերող, և նրա գույքային իրավունքները պաշտպանված են, եթե գույքը ձեռք բերողը գույքի նկատմամբ այն օտարողի իրավունքների վերաբերյալ բարեխիղճ մոլորության մեջ է եղել, այն է՝ չգիտեր և պարտավոր չէր իմանալ գույքի օտարման գործարքում իր կոնտրագենտի՝ նման գործարք կնքելու իրավունքի բացակայության մասին:

գ. Բարեխիղճ ձեռք բերողից գույքը կարող է բռնագանձվել միայն ՔՕ-ի միևնույն հոդվածով սահմանված որոշակի դեպքերում, այն է՝ երբ գույքի տիտղոսային, այն է՝ լեգիտիմ սեփականատերը կամ տիրապետողը տվյալ գույքը կորցրել է, այդ գույքը հափշտակվել է կամ այլ կերպ դուրս է եկել տիրապետումից՝ իրական սեփականատիրոջ, գույքն օրինական հիմքերով տիրապետողից կամքից անկախ հանգամանքներում, կամ գույքն օտարելու իրավունք չունեցող անձը գույքն օտարել է՝ առանց հատուցում ստանալու:

**ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1098 (ՎԴ) և թիվ 3-1311 (ՎԴ) քաղաքացիական գործերով 2007թ. կայացված որոշումներից, թիվ ԵԱԴԴ/0024/02/08 քաղաքացիական գործով 2009թ. կայացված որոշումից, թիվ ԵԱՆԴ/1402/02/09 քաղաքացիական գործով 2012թ. կայացված որոշումից, ինչպես նաև մի շարք այլ որոշումներից հետևում է, որ անձին բարեխիղճ ձեռք բերող կարելի է համարել, ինչպես նաև անձից վերջինիս կողմից ձեռք բերված գույքը**

կարելի է հետ պահանջել միայն ՔՕ-ի 275-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում և այդ հոդվածի պահանջների պահպանմամբ:

Այսինքն՝ բարեխիղճ ձեռք բերողի ինստիտուտի և վերջինիս հետ կապված գույքի օտարման գործարքների իրավական հետևանքների կարգավորումն ու որոշումը կատարվում է ՔՕ-ի 275-րդ հոդվածով սահմանված կարգով և չի կարող հակասել նշված հոդվածին:

Հարկ է նկատի առնել, որ բարեխիղճ ձեռք բերողի մասով ոչ միայն իրավակիրառ պրակտիկան պետք է համահունչ լինի ՔՕ-ին, այլև նոր ընդունվող օրենքները: Սույն կանոնը նախատեսված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով (**այսուհետ՝ նաև ՆԻԱՕ**):

Տարբեր նորմատիվ իրավական ակտերի միջև հակասության դեպքում, **ըստ ՆԻՕԱ----ի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի**, [գործում են] *ավելի վաղ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը*:

ՔՕ-ն ուժի մեջ է մտել 01.01.1999թ.-ին, իսկ կոնկրետ 275-րդ հոդվածը նաև փոփոխության է ենթարկվել 16.09.2009թ.-ին: Հետևաբար, քանի դեռ ՔՕ-ում և, մասնավորապես, դրա 275-րդ հոդվածում չի կատարվել բարեխիղճ ձեռք բերողին վերաբերող կանոնակարգումների փոփոխություն, ցանկացած ավելի ուշ ընդունված օրենք և այլ նորմատիվ իրավական ակտ չի կարող հակասել ՔՕ-ին, այդ թվում նաև Նախագիծը՝ ընդունման պարագայում:

Այժմ՝ առավել մանրամասն ՔՕ-ին Նախագծի հակասության իրավական հիմքերի մասին:

ՔՕ-ի 275-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ վճռաբեկ դատարանի վերոնշյալ նախադեպային պրակտիկայով գույքն ապօրինի տիրապետումից կարող է հետ պահանջել միայն այդ գույքի սեփականատերը:

Նախագծով նախատեսված հիմքերով գույքը ենթադրյալ ապօրինի սեփականատիրոջից կամ այլ ապօրինի տիրապետողից բռնագանձելու պահանջ (հայց) ներկայացնում է ՀՀ-ն՝ ի դեմս ՀՀ *դատախազության: Այդ մասին է վկայում Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը*:

Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ ուսումնասիրության և գույքի բռնագանձման հիմքերից ամենևին ոչ բուլորով է պետությունը բռնագանձման ենթակա գույքի սեփականատերը: Հետևաբար, ստացվում է, որ պետությունը Նախագծով նախատեսված բազմաթիվ դեպքերում գույքի ֆորմալ սեփականատիրոջը կամ բարեխիղճ կամ ոչ բարեխիղճ ձեռք բերողին գույքը վերադարձնելու պահանջ ներկայացնելու պարագայում կխախտի ՔՕ-ի 275-րդ հոդվածը, քանի որ այդ գույքի սեփականատերը չի հանդիսացել և չի հանդիսանում:

Անգամ եթե հաստատվի, որ գույքը հանրային ծառայող հանդիսացող անձի կողմից ձեռք է բերվել անօրինական ճանապարհով, այդ գույքի վերադարձի պահանջ կարող է ներկայացնել միայն այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունեցած անձը, ում տիրապետումից գույքը դուրս է եկել անօրինական և (կամ) այդ անձի կամքից անկախ եղանակով, և այդ պահանջը ենթակա է քննության հայցային վարույթի կարգով՝ քրեական դատավարության և քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով: Որոշակի դեպքերում, այո՛, սեփականատեր կարող է լինել ՀՀ-ն, սակայն կարող են լինել սովորաբար դեպքեր, երբ պետությունը տվյալ գույքի սեփականատեր չլինի, և վերջինիս դերը սահմանափակվի այլ անձանց սեփականության իրավունքի վերականգնման և մեղավորներին պատշաճ ընթացակարգով պատժելու սահմանադրական պարտականության կատարմամբ՝ կոնկրետ գործում չունենալով ուղղակի գույքային՝ սեփականատիրական շահ:

Բացի այդ, Նախագծով, ըստ էության, բարեխիղճ ձեռք բերող համարվելու համար նախատեսվում է ավելի խիստ չափանիշ, քան ՔՕ-ով՝ այդպիսով ստեղծելով հակասություն վերջինիս հետ: Ի մասնավորի, բացի գույքը ձեռք բերելիս փոխկապակցված անձի բարեխիղճ մոլորության մեջ գտնվելուց, Նախագծով նախատեսվում է նաև գույքի ձեռքբերման միջոցների օրինականության պահանջ, որը ենթակա է ստուգման ՀՀ դատախազության և դատարանի կողմից՝ Նախագծով և Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընթացակարգերով: Ավելին՝ գույքի սեփականատեր անձից այն ձեռք բերած՝ Նախագծով



փոխկապակցված անձն ինքը պետք է ապացուցի իր եկամուտների օրինականությունը:

Եթե գույքի սեփականատիրոջ պարագայում, դատելով Նախագծի նպատակներից, մեղավորության կանխավարկածի կիրառումը, կարող է ինչ-որ առումով արդարացված լինել, ապա նշյալ սեփականատիրոջից գույքը ձեռք բերած անձի նկատմամբ նման կարգավորում նախատեսելը հակասում է ՔՕ-ի 275-րդ հոդվածին, քանի որ դուրս է գալիս բարեխիղճ ձեռք բերողի իրավական հասկացության նորմատիվ շրջանակից, ինչպես նաև հակասության մեջ է մտնում ՀՀ Սահմանադրության և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (**այսուհետ՝ նաև ՄԻԵԴ**) նախադեպային պրակտիկայի հետ:

Ընդ որում ներքոշարադրյալ հակասությունը հավասարապես վերաբերում է նաև փոխկապակցված անձից գույքի բռնագանձման հիմքերին և դեպքերին:

Այսպես՝ **ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** *յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ փիրապելու, օգտագործելու և փնօրինելու իրավունք:*

**Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝** *սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:*

**ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝** *հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:*

### **ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝**

1. *Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում*

Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Սույն պարագայում Նախագծով հետապնդվում է հանրության գույքային շահերի պաշտպանության իրավաչափ նպատակ՝ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան: Մինչդեռ, համաչափության սահմանադրական սկզբունքը պահանջում է նաև, որ սեփականության հիմնական իրավունքի սահմանափակման համար ընտրված միջոցները լինեն պիտանի և անհրաժեշտ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար՝ տվյալ դեպքում հանրության գույքային շահերը պաշտպանելու համար:

**ՄԻԵԴ-ը, քննարկելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև ՄԻԵԿ) 1-ին արձանագրությամբ պաշտպանվող սեփականության իրավունքը պետության կողմից սահմանափակելու իրավաչափությունը, առաջ է քաշում հետևյալ չափանիշները՝ օրինականություն, սահմանափակման կամայական կիրառման բացառում, սահմանափակման իրավական կարգավորման հասանելիություն, որոշակիություն, կանխատեսելիություն և անհրաժեշտություն ժողովրդավարական հասարակությունում (Vistiņš and Perepjolkins v. Latvia, Grand Chamber, Judgement, 25.10.2012, Case of East/West Alliance Limited v. Ukraine, Judgment, 02.06.2014, **Case of Ališić and Others V. Bosnia and Herzegovina, Croatia, Serbia, Slovenia and The Former Yugoslav Republic of Macedonia**, Judgement 06.11.2012, **Case of Brumărescu v. Romania, Judgement, 28.10.1999** և այլն):**

Նշված նախադեպային որոշումներից հետևում է, որ սեփականության իրավունքի նկատմամբ պետության միջամտությունը կամ սահմանափակումն օրինական է, եթե այն նախատեսված է օրենքով, որը որոշակի է, կանխատեսելի, հասանելի է, առկա են երաշխիքներ այդ սահմանափակման կամայական կիրառումը բացառելու համար, ինչի արդյունքում անձի համար հասկանալի է սահմանափակման

բնույթն ու բովանդակությունը, և նա կարող է կանխատեսել իր վարքագիծը և դրա իրավական հետևանքները, պաշտպանել իր իրավունքները, ինչպես նաև պետության կողմից անձի սեփականության իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում, այն է՝ ողջամիտ հավասարակշռություն է պահպանվում անձի սեփականության իրավունքի և հանրային շահի միջև, և առկա է համաչափություն կիրառված սահմանափակման բնույթի և ինտենսիվության և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև:

Տվյալ պարագայում Նախագծով նախատեսվում է անձի սեփականության իրավունքի սահմանափակում, որը հետապնդում է իրավաչափ նպատակ, սակայն այն չի կարող համարվել օրինական և համաչափ, քանի որ Նախագծով սահմանված է մի կարգավորում, որը հակասում է ՔՕ-ին, իսկ վերջինս, իր հերթին, գերակա է Նախագծի կարգավորման նկատմամբ: Արդյունքում ստեղծվում է հակասություն երկու օրենքի միջև, և վերջիններիս հասցեատերերի համար որոշակի, կանխատեսելի և հասկանալի չէ, թե ինչ վարքագիծ պետք է որդեգրեն, և որոնք են համապատասխան վարքագծի իրավական հետևանքները:

Նույնը վերաբերում է նաև փոխկապակցված անձի հետ կնքված գործարքի՝ Նախագծի իմաստով օրինաչափ գնի որոշման կառուցակարգերի՝ Նախագծով սահմանված չլինելուն, որպիսի դեպքում սեփականատիրոջ համար որոշակի և կանխատեսելի չէ, թե գործարքի ինչպիսի գինն է, որ բացառում է պետության կողմից բռնագանձման վարույթի հարուցումն ու իրականացումը, և որ դեպքերում է սեփականատերը պաշտպանված գույքային վնասներից:

Բացի այդ, թե՛ փոխկապակցված անձի և թե՛ երրորդ անձի համար նախատեսված իրավակարգավորումներում ապահովված չէ ողջամիտ հավասարակշռությունը սեփականության իրավունքի սահմանափակման և հանրային շահի միջև՝ հետևյալ պատճառներով:

Բարեխիղճ ձեռք բերողի նկատմամբ, ի տարբերություն այլ դեպքերի, Նախագծով նախատեսված հիմքերով կիրառվում են վերջինիս իրավական կարգավիճակով չպայմանավորված սահմանափակումներ՝ ի դեմս գույքի

ձեռքբերման միջոցների օրինականության ստուգման և դրանց օրինականության ապացուցման բեռը բարեխիղճ ձեռք բերողի վրա դնելու:

Սույն իրավիճակը հանգեցնում է նաև վարչական և դատական կամայականության, քանի որ ստացվում է, որ քաղաքացիական շրջանառությունում այսուհետ պետք է միևնույն կարգավիճակն ունեցող սուբյեկտի համար գործեն տարբեր իրավական ռեժիմներ՝ կախված նրանից, թե որ օրենքով է առաջնորդվում իրավակիրառող մարմինը:

Փոխկապակցված անձից գործարքի գնի էական ցածր լինելու հիմքով գույքի բռնագանձման դեպքում ևս հանրային և մասնավոր շահերի միջև ողջամիտ հավասարակշռություն չկա, քանի որ բացակայում է գործարքի գնի ողջամտությունը որոշելու որևէ օբյեկտիվ չափանիշ, որը թույլ կտա զատորոշել ապօրինի ծագում ունեցող սեփականությունն օրինականացնելուն ուղղված կեղծ գործարքը քաղաքացիական շրջանառության ընթացքում կնքված օրինական և բարեխիղճ գործարքներից: Արդյունքում այդ գործարքների հիման վրա գույք ձեռք բերած սեփականատերը կամ օրինական տիրապետողը բավարար չափով պաշտպանված չէ, ինչը պետության միջամտությունը սեփականության իրավունքին դարձնում է ոչ իրավաչափ:

Խնդրահարույց է նաև ժողովրդավարական հասարակությունում Նախագծով առաջարկվող իրավասահմանափակման անհրաժեշտության, այն է՝ պիտանիության և համարժեքության հարցը: Եթե կոնկրետ հանցագործություն կամ այլ իրավախախտում կատարած անձի ապօրինի միջոցներով ձեռքբերված գույքն այդ անձից բռնագանձելը կարող է դիտվել անհրաժեշտ ժողովրդավարական և իրավական պետությունում, ապա բարեխիղճ ձեռքբերող հանդիսացող և Նախագծի իմաստով փոխկապակցված անձ համարվող սուբյեկտի գույքային իրավունքների և շահերի նկատմամբ առաջարկվող սահմանափակումների կիրառումը, ներառյալ մեղավորության կանխավարկածի կիրառումը չի կարող համաչափ համարվել, քանի որ տվյալ անձը շատ հաճախ կարող է ընդհանրապես տեղյակ չլինել ինչպես իր կոնտրագենտի անձի, պաշտոնեական նախկին և ներկա դիրքի, գույքային դրության վերաբերյալ, այնպես էլ կապված չլինի որևէ հանցավոր սխեմայի հետ, սակայն

Նախագծով նախատեսվող կանոնակարգումների համաձայն՝ նրանից գույքը վերցվի փաստացի միայն այն հիմքով, որ գույքը ձեռք է բերվել պաշտոնատար անձի կողմից:

Ավելին՝ մեղավորության կանխավարկածի կիրառման մասով Նախագիծ կարող է հակասել նաև ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով, ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքն և ՄԻԵԴ-ի համապատասխան նախադեպային պրակտիկային:

Հետևաբար, Նախագծով նախատեսված՝ խնդրո առարկա սահմանափակումը չի կարող համարվել պիտանի, անհրաժեշտ և համարժեք՝ համաձայն ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի:

Վերը նշվածը հավասարապես կիրառելի է նաև փոխկապակցված անձից գործարքի գնի հիմքով գույքի բռնագանձման դեպքերի նկատմամբ:

Վերոնշյալ համատեքստում առաջարկվող իրավակարգավորումը խնդրահարույց է նաև օտարերկրյա ներդրումների պաշտպանության իրավական երաշխիքների ապահովման տեսանկյունից:

Մասնավորապես, «**Օտարերկրյա ներդրումների մասին**» օրենքի (այսուհետ՝ **նաև ՕՆՕ**) **7-րդ հոդվածի համաձայն՝** օտարերկրյա ներդրումները կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 փարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությամբ, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը:

**ՕՆՕ-ի 8-րդ հոդվածի համաձայն՝** օտարերկրյա ներդրումները Հայաստանի Հանրապետությունում ազգայնացման ենթակա չեն:

Պետական մարմինները չեն կարող նաև բռնագրավել օտարերկրյա ներդրումները: Առգրավումը որպես բացառիկ միջոց թույլատրվում է միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտակարգ դրության պայմաններում՝ դատարանի վճռով և լրիվ փոխհատուցմամբ:

**ՕՆՕ-ի 9-րդ հոդվածի համաձայն՝** օտարերկրյա ներդրողներն ունեն նյութական և բարոյական այն վնասների, ներառյալ բաց թողնված օգուտի դատական կարգով փոխհատուցման իրավունքը, որոնք հասցվել են Հայաստանի

Հանրապետության պետական մարմինների կամ դրանց պաշտոնավար անձանց կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող գործողությունների, ինչպես նաև օտարերկրյա ներդրողի կամ օտարերկրյա ներդրումներով ձեռնարկության նկատմամբ նշված մարմինների կամ դրանց պաշտոնավար անձանց կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով:

Օտարերկրյա ներդրողների կրած բոլոր այն վնասները, որոնք նրանց հասցվել են սույն օրենքի 8 հոդվածում և 9 հոդվածի առաջին մասում նշված գործողությունների հետևանքով, ենթակա են անհապաղ փոխհատուցման ընթացիկ շուկայական կամ անկախ աուդիտների գնահատումներով որոշված գներով՝ այն արժույթով, որով կատարվել է ներդրումը կամ, կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ մեկ այլ արժույթով:

Փոխհատուցման իրավունքի ծագման պահից մինչև դրա իրացման պահը անցած ժամանակահատվածի համար փոխհատուցման գումարի նկատմամբ հաշվարկվում են տոկոսներ՝ Հայաստանի Հանրապետության վարկային շուկայում ժամկետային ավանդների ընթացիկ տոկոսադրույքների չափով:

Նախագծի և ՕՆՕ-ի միջև առկա է աչքի զարնող հակասություն: Նախ՝ նշենք, որ ՕՆՕ-ն կիրառման իմաստով նախապատվություն ունի Նախագծի նկատմամբ, քանի որ տարբեր նորմատիվ իրավական ակտերի միջև հակասության դեպքում, **ըստ ՆԻՕԱ----ի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի**, [գործում են] *ավելի վաղ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը*: ՕՆՕ-ն ուժի մեջ է մտնել 04.08.1994թ.-ին:

ՕՆՕ-ն սահմանում է օտարերկրյա ներդրողների և ներդրումների համար արտոնյալ պայմաններ, որոնց ոչ սպառիչ ցանկը նշված է վերևում: Փաստորեն, ՀՀ-ն երաշխավորում է օտարերկրյա ներդրումների համար օրենսդրական կայունություն և կանխատեսելիություն՝ ներդրողների ցանկությամբ, 5 տարով նրանց նկատմամբ հետաձգելով ներդրմանը հաջորդած ժամանակահատվածում կատարված օրենսդրական փոփոխությունների կիրառումը, օտարերկրյա ներդրողների գույքն

անձեռնմխելի է և ենթակա չէ ազգայնացման կամ բռնագրավման, իսկ առգրավում հնարավոր է միայն բացառիկ դեպքերում՝ արտակարգ դրության ժամանակ, այն էլ դատարանի վճռի հիման վրա և լրիվ փոխհատուցմամբ:

Նախագծով օտարերկրյա ներդրում հանդիսացող գույքի մասով որևէ բացառություն չի արվել, ինչն առնվազն իրավաբանական տեխնիկայի տեսանկյունից խնդրահարույց է, ինչպես նաև խնդիր է առաջանում՝ արդյոք պետությունը նպատակ ունի փոխել իր քաղաքականությունը նաև օտարերկրյա ներդրումներին տրվող իրավական պաշտպանության կառուցակարգերի հանդեպ:

Օրենսդրական բացի տպավորություն թողնող այս խնդիրը ՀՀ-ի համար կարող է ստեղծել վտանգավոր հետևանքներ նաև նրանով, որ ՕՆՕ-ի 9-րդ հոդվածով ՀՀ-ն ստանձնել է պետական մարմինների և պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով օտարերկրյա ներդրողների կրած վնասները լրիվ հատուցելու պարտավորություն: Ընդ որում, ենթադրաբար, ՀՀ-ի սույն պարտավորությունը գերազանցում է ՔՕ-ով պայմանագրային և դելիկտային պարտավորությունների համար սահմանված քաղաքացիաիրավական պատասխանատվության չափը, քանի որ ՕՆՕ-ի նշյալ հոդվածում խոսք է գնում նաև օտարերկրյա ներդրողների նկատմամբ ՀՀ-ի ստանձնած պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով առաջացած վնասը հատուցելու պարտականության մասին, որը կարող է ներառել, օրինակ՝ Նախագծով օտարերկրյա ներդրումների համար ստեղծվելիք հնարավոր դժվարությունները:

**2. Նախագծով սահմանված են գույքի բռնագանձման հիմքեր, որոնք կապված չեն գույքի առերևույթ սեփականատիրոջ կողմից հանցագործության կատարման հետ:**

Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ սույն օրենքով նախատեսված կարգով իրավասու մարմինը կարող է սկսել ուսումնասիրություն հետեյալ հիմքերի առկայության դեպքում՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված փվյալներով առկա են բավարար

*հիմքեր կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պարկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:*

Ուսումնասիրության վերոնշյալ հիմքի առկայության դեպքում ՀՀ դատախազությունը վարույթ է հարուցում այնպիսի տեղեկատվության և հանգամանքների առերևույթ առկայության հիման վրա, որոնք կապված չեն կամ ուղղակիորեն չեն առնչվում հանցագործության կատարման կամ դրա կատարման հիմնավոր կասկածի հետ: Դրա մասին է վկայում այն հանգամանքը, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով (**այսուհետ՝ նաև ՕՊԳ**) սահմանված միջոցառումները կապված են ոչ միայն առերևույթ հանցագործությունների դեպքերի, այլև այլ իրավախախտումների հայտնաբերման և բացահայտման հետ: Մասնավորապես, **ՕՊԳ-ի 3-րդ հոդվածի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական գործունեությունը մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական ու հասարակական անվտանգությունը հակաիրավական ուրնծգություններից պաշտպանելու նպատակով՝ օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացումն է:**

**ՕՊԳ-ի 4-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակներն են՝ հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների խախտումների նախազգուշացումը, կանխումը, խափանումն ու բացահայտումը:**

ՕՊԳ-ի վերոնշյալ դրույթներից հետևում է, որ օպերատիվ -հետախուզական միջոցառումների իրականացման նպատակներից մեկը հարկային իրավախախտումների նախազգուշացումը, կանխումը, խափանումն ու բացահայտումն է: Ինչպես հայտնի է, հարկային իրավախախտումները կարող են դրսևորվել հանցագործության և վարչական զանցանքի ձևով և կարգավորվել, համապատասխանաբար, Քրեական օրենսգրքով, Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքով և Հարկային օրենսգրքով:



Այսինքն՝ Նախագծով հնարավոր է համարվում վարչական զանցանքի կատարման բավարար կասկածի առկայության պարագայում, որը կապված է, օրինակ՝ հարկային իրավախախտման հնարավոր կատարման հետ, առանց վարչական մարմնի ուժի մեջ մտած վերջնական որոշման, սկսել անձի գույքի բռնագանձման վարույթ և դատական կարգով բռնագանձել այն:

Տվյալ դեպքում գործ ունենք, թերևս, ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի և 78-րդ հոդվածի, ինչպես նաև ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի և 1-ին արձանագրության և ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումների խախտման հետ՝ վերոնշյալ 1-ին կետում նշված հիմնավորումներով: Միայն թե այս անգամ խախտումն ավելի ցցուն է այն առումով, որ ենթադրյալ վարչական իրավախախտումը ձեռք է բերում հանցանքի բնույթ, քանի որ Նախագծով նախատեսվող սանկցիան՝ բացասական իրավական հետևանքը՝ գույքի բռնագանձումը, ակնհայտորեն համաչափ չէ կատարված արարքի բնույթին և ծանրությանը և այդպիսով ունի պատժիչ էություն: Վերջինս բնորոշ է հանցագործության կատարման համար կիրառվող պատասխանատվության միջոցներին, որպիսի փաստն արձանագրված է նաև ՄԻԵԴ-ի կողմից: **ՄԻԵԴ-ը նման դեպքերի համար գտել է, որ երբ տվյալ պետության օրենսդրությամբ իրավախախտումը չի համարվում հանցագործություն, սակայն վերջինիս համար նշանակվող պատասխանատվության միջոցը՝ իր խստությամբ և բացասական հետևանքների ընդգրկմամբ համաչափ չէ կատարված իրավախախտմանը և ձեռք է բերում պատժի բնույթ, ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով այն դիտարկվում է որպես հանցանք, և հետևաբար, անձը նման դեպքերում պետք է օգտվի քրեական մեղադրանքից պաշտպանության բոլոր իրավունքներից և ընթացակարգային երաշխիքներից** (Case of Engel and Others v. The Netherlands, Judgement, 08.06.1976, Case of Phillips v. The United Kingdom, Judgement, 05.07.2001 **և այլն**):

Ակնբախ է, որ Նախագծով բռնագանձման ենթակա գույքի սեփականատիրոջ համար սահմանված պաշտպանության երաշխիքները հատկապես սույն դեպքի համար բավարար չեն: Մասնավորապես, անձը պետք է օգտվի անմեղության կանխավարկածից ,մինչդեռ, Նախագծով կիրառելի է համարվում մեղավորության

կամ գույքի ձեռքբերման անօրինականության կանխավարկածը, բացակայում են Քրեական դատավարության օրենսգրքով կասկածյալին կամ մեղադրյալին վերապահված մի շարք իրավունքներ և երաշխիքներ, այդ թվում վարույթն իրականացնող մարմնի՝ արարքի կատարման հիմնավոր կասկածի ինստիտուտը՝ Նախագծում ամրագրված կասկածի բավարար հիմքերի փոխարեն:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ բռնագանձման վարույթի հարուցման և իրականացման քննարկվող հիմքը խոցելի է՝ թե բովանդակային և թե՛ ընթացակարգային առումներով՝ հակասության մեջ գտնվելով ՀՀ Սահմանադրության, ՄԻԵԿ-ի և ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկայի հետ:

### **3. *Նախագծով գույքի բռնագանձման հիմքերը սահմանվել են առանց բացառությունների և տնտեսական ու իրավական ռիսկերի կանխարգելման կառուցակարգերի***

Նախագիծն իր բնույթով հանդիսանում է անցումային արդարադատության գործիքներից մեկը և միտված է խոշոր սեփականության լեգիտիմացմանը և հանրային համերաշխության հաստատմանը: Միևնույն ժամանակ նման հավակնոտ նպատակին ուղղված կառուցակարգերը բավարար չափով հավասարակշռված և արդյունավետ չեն: Մասնավորապես, հայտնի է, որ Խորհրդային Միության փլուզումից և կապիտալիստական հասարակարգին անցումից հետո սեփականաշնորհման գործընթացը ԱՊՀ գրեթե բոլոր երկրներում անցել է՝ առանց ինստիտուցիոնալ բազայի և խորքային ռազմավարության, ինչի արդյունքում գործընթացն ուղեկցվել է լայնամասշտաբ խախտումներով և չարաշահումներով: Միևնույն ժամանակ սեփականաշնորհման այս գործընթացը թույլ է տվել վերափոխել տնտեսության սոցիալիստական մոդելը և հաստատել շուկայական հարաբերություններ: Արդյունքում հասարակության մեջ տեղի է ունեցել բնական սեզմենտացիա, ձևավորվել են սեփականատերերի տարաբնույթ շերտեր և խավեր, որոնց ստեղծած ձեռնարկություններն այսօր ՀՀ տնտեսության լոկոմոտիվներն են և ապահովում են բյուջետային մուտքերը:

Հանրային և մասնավոր շահերի գործող հավասարակշռությունը, անխոս, պետք է վերանայել, քանի որ սեփականության վերաբաշխման գործընթացում տեղի են ունեցել համակարգային խախտումներ, հնարավոր է՝ նաև հանցագործություններ, որոնց հետևանքով տնտեսական հարաբերություններն ու ազգային հարստության բաշխումը կատարվել է ոչ իրավաչափ և անարդար կերպով: Սակայն բոլոր դեպքերում հանրության շահը պահանջում է նաև հնարավոր բոլոր իրավական ձևերով խուսափել այնպիսի քայլերից, որոնք կարող են հանգեցնել տնտեսության փլուզմանը և գործող անկատար տնտեսական հարաբերությունների կոլապսի:

Այսօր գործող խոշոր բիզնեսի մեծագույն մասը ձևավորվել է հետխորհրդային մասնավորեցման գործընթացի արդյունքում, և ցանկության պարագայում գործող Նախագիծը թույլ է տալիս բռնագանձման վարույթներ սկսել դրանց բոլորի դեմ: Այդ նույն ժամանակ խնդիր է առաջանում, թե ինչպես ապահովել խոշոր տնտեսվարողների ձեռնարկությունների բնականոն գործունեությունը բռնագանձումից՝ փաստացի ազգայնացումից հետո, ինչ եղանակով երաշխավորել բազմահազար աշխատատեղերի պահպանումը:

Անկախ սուբյեկտիվ ցանկություններից՝ ՀՀ տնտեսության իրական և ֆինանսական հատվածներն ունեցել են և ունեն ստվերայնության բավական բարձր մակարդակ, բայց և տիրապետում են Հանրապետության շրջանառու տնտեսական միջոցների մեծ մասին: Դրանց դուրս բերումը տնտեսական դաշտից անխուսափելիորեն հանգեցնելու է տնտեսական ողջ արժեշղթայի խաթարմանը՝ դրանից բխող աղետալի հետևանքներով: Ոչ վաղ անցյալում Խորհրդային Միությունում կիրառված ազգայնացման գործընթացի՝ այսպես կոչված կուլակաթափության արդյունքում այդ երկիրն ընկղմվեց խորագույն ճգնաժամի մեջ, մինչև կոմունիստական իշխանությունն ինքը ժամանակավորապես վերականգնեց մասնավոր սեփականության և շուկայական տնտեսության որոշակի տարրեր՝ տնտեսությանը զարկ տալու նպատակով:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Նախագծի ներկայիս խմբագրության ընդունման պարագայում ՀՀ կառավարությունը կանգնելու է անխուսափելի երկընտրանքի առջև՝

իրականացնել սեփականության լայնամասշտաբ վերաբաշխում՝ հնարավոր ծանր հետևանքներով կամ բռանագաճման վարույթների հարուցման հարցում իրականացնել ընտրողական և խտրական մոտեցում՝ այդպիսով կամա թե ակամա խախտելով արդեն օրենք դարձած սույն Նախագիծը և չապահովելով օրենքի միատեսակ կիրառում՝ ի հեճուկս օրենքի առջև բոլորի հավասարության՝ ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածով նախատեսված սկզբունքի:

Հատկանշական է, որ Արևելյան Եվրոպայի, Աֆրիկայի և Հարավային Ամերիկայի այն երկրներում, որտեղ կիրառվել են անցումային արդարադատության կառուցակարգեր, օրինակ՝ Լատվիայում, Չեխիայում, Լեհաստանում, Պերուում, Քենիայում և այլուր, որոշվել են այն հստակ սկզբունքները, որոնց հիման վրա պետք է տեղի ունենա ռեստիտուցիան կամ անցյալում խախտված իրավունքների վերականգնումը: Ճանաչում է ստացել այն մոտեցումը, որ անցյալի ամբողջական վերանայումը ֆիզիկական, ժամանակային, տնտեսական, իրավական և այլ պատճառներով հնարավոր չէ, և հարկավոր է գտնել այն ողջամիտ հավասարակշռությունը, որը թույլ կտա հասնել սոցիալական արդարության և համերաշխության հաստատմանը և դրա շնորհիվ՝ ապահովել տնտեսության ավելի արդյունավետ գործառույն ու զարգացումը:

Օրինակ՝ միջազգային պրակտիկայում ընդունված է ոչ իրավաչափ ճանապարհով ստեղծված խոշոր ձեռնարկատիրական կապիտալին պարտավորեցնել թիրախային ներդրումներ անել տնտեսությունում, որոշակի ժամանակահատված վճարել ավելի բարձր շահութահարկ, գույքահարկ, հողի հարկ և այլն, տնտեսական ընկերություններում պետությանը մասնաբաժին տրամադրել և այլն: Նպատակը տնտեսության իրական հատվածը սպասարկող տնտեսական կազմակերպությունների անխափան գործունեությանը չխոչընդոտելն է, երկրի ներդրումային գրավչությանը չվնասելը և որպես արդյունք տնտեսության փլուզումից խուսափելը:

Փոխարենը՝ ավելի խիստ միջոցներ են ձեռնարկվել ապօրինի այն կապիտալի նկատմամբ, որը ձևավորվել է ակնհայտ հանցավոր ճանապարհով, ինչպես օրինակ՝

թմրամիջոցների և զենքերի ապօրինի շրջանառություն (ի դեպ ներառված է՝ Օրենքի նախագծում, ինչպես նաև կեղծ ձեռնարկատիրությունը և հարկերից խուսափումը), ահաբեկչություն, ինչպես նաև այն գույքի նկատմամբ, որը հանրությանը տնտեսական օգուտ չի տալիս, այլ սեփականատիրոջ կողմից օգտագործվում է որպես անձնական խնայողություն: Նման դեպքերում այդպիսի գույքը, օրինակ՝ ավտոմեքենաները, բնակարանները, առանձնատները, նավերը և այլ նմանաբնույթ գույքը բռնագրավվել է:

Կարելի է Նախագծով ևս սահմանել բռնագրավման առարկա գույքի մասով որոշակի բացառություններ, չափանիշներ և ընթացակարգեր, որոնք թույլ կտան տնտեսության իրական և ֆինանսական հատվածներում ներգրավված ձեռնարկատերերին առաջարկել պետության հետ հաշտեցման ճկուն կառուցակարգեր, որոնք թույլ կտան մի կողմից վերականգնել սոցիալական արդարությունը՝ խոշոր կապիտալի վրա դնելով սոցիալական որոշակի պատասխանատվություն, իսկ մյուս կողմից ապահովագրվել տնտեսության շրջանառու միջոցներից զրկվելու վտանգից:

Մեր կարծիքով, Օրենքի կիրառության միատեսակության և խտրականության բացառման պահանջը առաջադրվելու է հասարակության լայն շերտերի կողմից, ինչպես նաև բոլոր այն անձանց կողմից, որոնց գույքը Օրենքի հետևանքով համարվելու է ապօրինի ծագում ունեցող: Անկախ նրանից, որ Օրենքը հնարավորություն չի տալիս շահագրգիռ անձանց դիմումների հիման վրա ուսումնասիրության վարույթներ սկսել, համոզված ենք, որ հրապարակումները ՀՀ տնտեսության համար կարևոր ճյուղերի (հանքարդյունաբերություն, հեռահաղորդակցություն) և գործարքների (էներգետիկ դաշտին վերաբերվող գործարքներ, բանկերում բաժնեմասեր) վերաբերյալ լինելու են բացահայտ, հետևողական և Հայաստանի Հանրապետությունը լեգիտիվ պատճառներ չի կարող ներկայացնել, թե ինչու այս կամ այն հարցով ուսումնասիրություն չի կատարվում: Այդ պատճառով, առաջարկում ենք նախապես սկզբունքները սահմանել այնպես, որ ՀՀ-ն հնարավորություն ունենա չմիջամտել ՀՀ տնտեսության համար կարևոր ոլորտների գործունեությանը և այլ կարգով լրացուցիչ հատուցումներ պահանջի այդ ոլորտներից:

4. **Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված՝ հայցի ապահովման միջոցներից ավելի խիստ միջոցների նախատեսումը:**

**Նախագծի 25-րդ հոդվածի համաձայն.**

1. Կողմի միջնորդությամբ դատարանը, առաջնորդվելով սույն օրենքով նախատեսված առանձնահատկություններով, կիրառում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածով նախատեսված ապահովման միջոցներից մեկը:

2. Եթե բացառիկ դեպքերում գործի քննության առանձնահատկություններից ելնելով՝ դատարանը, կիրառելով հայցի ապահովում, որոշում է կայացնում գույքը հանձնել պետության փրկապետությանը, փվյալ գույքի կառավարումը եւ պահպանումն իրականացնում է պետությունը:

3. Գույքը որպես հայցի ապահովում կարող է հանձնվել պետությանը, եթե.

1) առկա է հավանականություն, որ հակառակ դեպքում գույքի արժեքը կարող է էականորեն նվազել.

2) առկա է հավանականություն, որ գույքը կարող է օգտագործվել հանցագործության կատարման համար.

3) գույքի կամ դրա օգտագործման առանձնահատկությամբ պայմանավորված առկա է հավանականություն, որ այն պատասխանողի մոտ թողնելը կարող է անհնարին դարձնել կամ էականորեն դժվարացնել գույքի հետագա բռնագանձումը:

4. Գույքը իրավասու մարմնի կողմից կարող է հանձնվել գույքի պահպանության համար անհրաժեշտ սարքավորումներ, փարածքներ եւ հատուկ որակավորում ունեցող աշխատակազմ ունեցող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, ինչպես նաեւ պետական (պետական մասնակցությամբ) կազմակերպություններ:

5. Եթե գույքի արժեքի պահպանման համար անհրաժեշտ է ապահովել դրա մասնագիտացված ընթացիկ կառավարում, պետությունը կարող է տվյալ գույքը հանձնել հավատարմագրային կառավարման:

6. Գույքի հավատարմագրային կառավարման համար մրցույթ անցկացնելու կարգը, ինչպես նաև հավատարմագրային կառավարման պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Գույքի պահպանման եւ կառավարման հետ կապված անհրաժեշտ ծախսերը ֆինանսավորվում են պետական բյուջեից:

Նախագծով բռնագանձման վարույթի առարկա գույքը հայցի ապահովման շրջանակներում պետության հանձնելու կառուցակարգը խնդրահարուց է:

Նախ՝ գույքի բռնագանձման վարույթը հանդիսանում է հայցային վարույթի տարատեսակ: Այդ մասին են վկայում **Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով, ինչպես նաև Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը, ըստ որի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ - ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման նպատակով իրավասու մարմնի կողմից նախաձեռնված ընթացակարգ, որը սկսվում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշման կայացմամբ, իր մեջ ներառում է գույքի քաղաքացիական բռնագանձման հայցի հարուցումը եւ ավարտվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով կամ սույն օրենքով նախատեսված այլ հիմքերով:**

Քաղաքացիական դատավարության հիմնարար սկզբունքներից են կողմերի իրավահավասարությունն ու մրցակցությունը, ինչը նշանակում է, որ վարույթի կողմերը՝ հայցվորը և պատասխանողը, ունեն հավասար իրավունքներ և երաշխիքներ, և մեկը մյուսի նկատմամբ չունի որևէ առավելություն:

Այսպես՝ **Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՔԴՕ) 11-րդ հոդվածի համաձայն՝**

1. Քաղաքացիական գործերով դատավարությունն իրականացվում է օրենքի և դատարանի առջև գործին մասնակցող բոլոր անձանց հավասարության սկզբունքի հիման վրա:

2. Դատարանն ապահովում է, որ գործի քննության ընթացքում գործին մասնակցող անձինք ունենան յուրաքանչյուր հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումը ներկայացնելու հավասար հնարավորություն, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

(...)

**ՔԴՕ-ի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործին մասնակցող անձանց մրցակցության հիման վրա...**

**ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկայում ևս կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքը ճանաչված է որպես ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկը, կոչվում է «զենքերի հավասարության սկզբունք» և նշանակում է, որ կողմերից որևէ մեկը չպետք է մյուսի նկատմամբ ունենա որևէ առավելություն կամ արտոնություն կամ ունենա այնպիսի կարգավիճակ, որը մյուս կողմին կոնկրետ անբարենպաստ վիճակում: Ընդ որում, դատարանը պարտավոր է հավասար վերաբերմունք ցուցաբերել կողմերի նկատմամբ : (European Court of Human Rights, Judgement 27.04.2000, Kuopila versus Finland **և այլն**):**

Տվյալ դեպքում Նախագծով թույլատրվում է դատարանին որոշակի հանգամանքներում հայցի առարկայի մաս կազմող գույքը փոխանցել հայցվորի՝ ՀՀ-ի իրավասության ներքո, ինչը նշանակում է նաև գույքը կառավարելու որոշակի իրավազորությունների տրամադրում: Հաշվի առնելով նաև, որ վեճի առարկան հենց գույքի նկատմամբ իրավունքն է, նման լիազորության տրամադրումը դատարանին՝



թեկուզև հայցի ապահովման կառուցակարգի շրջանակում, խախտում է կողմերի իրավահավասարության և մրցակցային դատավարության սկզբունքները, քանի որ ակնհայտ անբարենպաստ կացություն է ստեղծում պատասխանողի համար՝ հայցվոր կողմի համեմատությամբ: Ինչ-որ առումով դատարանի նման որոշումը կարող է որակվել անգամ որպես գործի ելքի նկատմամբ համոզմունքի կամ առնվազն կոնկրետ վերաբերմունքի դրսևորում:

Բացի այդ, Նախագծի վերոնշյալ հոդվածով դատարանին իրավունք տալով հայցի ապահովման միջոցի կարգով հայցվոր կողմի տիրապետմանը հանձնել վիճելի գույքը, նախատեսված չէ որևէ չափանիշ, հիմք կամ հանգամանք, որը թույլ կտա դատարանին յուրաքանչյուր դեպքում կողմնորոշվել հայցի ապահովման այս տարատեսակը կիրառելիս: Հետևաբար անորոշ է մնում՝ Նախագծի 23-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով այդ ինչ բացառիկ դեպքեր և գործի առանձնահատկություններ կարող են լինել, որպեսզի դատարանը կայացնի նշյալ որոշումը, որպիսի իրավիճակում դատարանի գործողությունները մշտապես կարող են դառնալ պատասխանող կողմի առարկության և բողոքարկման առարկա:

Հատկանշական է նաև, որ Նախագծով նախատեսված՝ գույքի բռնագանձման վարույթի առանձնահատկություններից մեկն այն է, որ հայցվոր կողմի կարգավիճակում պետական մարմինն է՝ ի դեմս ՀՀ դատախազության, և շատ կարևոր է, որպեսզի պետական մարմնի պետաիշխանական կարգավիճակը չունենա մյուս կողմին կաշկանդող դատավարական դրսևորում՝ որևէ լիազորության, առավելության կամ փաստացի վարքագծի տեսքով: Ավելին՝ դատարանի վրա դրված է առանձնահատուկ պարտականություն գործնականում ապահովել զենքերի հավասարության սկզբունքի կիրառումը: Այդ մասին նշված է նաև **ՔԴՕ-ի 11-րդ հոդվածի 2-րդ մասում**: Փոխարենը՝ տվյալ դեպքում դատարանին վերապահված է այնպիսի լիազորություն և այնպիսի անորոշ ընդգրկմամբ, որ դուռ է բացում դատարանի հնարավոր կամայական գործողությունների և դատախազության՝ որպես հայցվոր կողմի համար դատավարական առավելության ձեռքբերման համար:

Բաց է մնում նաև այն հարցը, թե գույքը պետությանը փոխանցելուց հետո վերջինս այդ գույքի նկատմամբ իրավասության ինչպիսի շրջանակ է ունենալու: Արդյո՞ք գույքն օգտագործելը և եկամուտ ստանալը կհամարվի իրավաչափ, կամ գույքի հնարավոր վնասման պարագայում ինչպիսի՞ ընթացակարգ է գործելու: Արդյունքում պատասխանող կողմը հայցի ապահովման քննարկվող միջոցի կիրառման և հայցվոր կողմի վարքագծի հետևանքով կարող է ստիպված լինել հակընդդեմ կամ նոր հայց ներկայացնել դատարան՝ պահանջելով գույքի վնասման, ոչնչացման, փչացման կամ վերջինիս վիճակի այլ վատթարացմամբ պատճառված վնասի հատուցում: Ավելացնենք նաև, որ **ՔԴՕ-ի 130-րդ հոդվածով 1-ին մասով հայցի ապահովման միջնորդություն կարող է ներկայացվել մինչև դատաքննության ավարտը**, մինչդեռ **ՔԴՕ-ի 140-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հակընդդեմ հայց կարող է ներկայացվել մինչև դատարանի կողմից ապացուցման բեռի բաշխման մասին որոշման ընդունումը**: Հետևապես, պատասխանող կողմը կարող է ստիպված լինել առանձին հայց հարուցել դատարան՝ կրելով ժամանակային, դրամական և այլ կորուստներ: Նման իրավիճակներ կարող են առաջանալ հատկապես ապահովման միջոցի երկարաժամկետ կիրառման պարագայում:

Ընդհանրապես, Նախագծով նախատեսված հայցի ապահովման կառուցակարգերի կիրառումը, հաշվի առնելով գույքի նոմինալ սեփականատիրոջ մեղավորության կանխավարկածը և պետության լոկ բավարար կասկածի առկայության պահանջը, գործնականում կարող է արդարացված չլինել, եթե դատական քննության արդյունքում կամ այլ հանգամանքների բերմամբ՝ պարզվի, որ գույքը ձեռք է բերվել օրինական հիմքերով, կամ հայցի ապահովման միջոցի կիրառումն այլ պատճառով հիմնավորված չի եղել, կարող է գույքի սեփականատիրոջը, փոխկապակցված կամ երրորդ անձանց նյութական կամ ոչ նյութական վնաս պատճառել: Հետևաբար, Նախագծով պետք է նախատեսվի վնասի հատուցման մեխանիզմ: Վերջինս կարող է արտահայտվել բլանկետային նորմով՝ հղում անելով Քաղաքացիական օրենսգրքի դեղիկտային պարտավորություններին նվիրված իրավակարգավորումներին:

5. **Ապօրինի գույքի բռնագանձման ժամանակ կիրառվող ապացուցման բեռի բաշխման վերաբերյալ միջազգային փորձը**

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը՝ այն է քաղաքացիադատավարական կարգով գույքի բռնագանձումը զարգացած իրավական համակարգ ունեցող երկրներում կիրառվող պրակտիկա է: Օրենքի հիմնական նպատակը ապացուցողական չափանիշի նվազեցումն է, որը պետության (նահանգների) համար առավել կիեշտացնի հանցագործության միջոցով ձեռք բերված գույքի բռնագանձումը հոգուտ պետության: Պատճառն այն է, որ նմանատիպ հայցատեսակների պարագայում կիրառվում է ոչ թե «ողջամիտ կասկածից վեր» (beyond reasonable doubt) առավել բարձր պացուցողական չափանիշը, այլ «ապացույցների գերակշռում» (preponderance of evidence) ապացուցողական չափանիշը:

Քաղաքացիադատավարական կարգով գույքի բռնագանձումը (civil forfeiture) լայնորեն կիրառվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այս կարգով բռնագանձման գործընթացը նախատեսված է “Civil Asset Forfeiture Reform Act of 2000” օրենքով: **Օրենքի «ապացուցման բեռի բաշխում» վերտառությամբ գլխի հենց առաջին հոդվածով նախատեսված է, որ հայց ներկայացրած կառավարությունն է պարտավորվում ապացույցների գերակշռմամբ ապացուցել, որ գույքը ենթակա է բռնագանձման:** Սույն սկզբունք - չափանիշն ամրագրված է նաև մի շարք նախադեպային որոշումներում՝ United States v. OneSixth Share, 326 F.3d 36, 40 (1st Cir. 2003), De Almeida v. United States, 459 F.3d 377, 381 (2d Cir. 2006), United States v. Juluke, 426 F.3d 323, 328- 29 (5th Cir. 2005).

Քաղաքացիական դատավարության կարգով գույքի բռնագանձման առավել բարձր շեմ է սահմանված Միացյալ Թագավորությունում: Գործընթացը նախատեսված է “**Proceeds of Crime Act 2002**” օրենքում: Ի տարբերություն ԱՄՆ-ի՝ **օրենքը նախատեսում է հատուկ սուբյեկտներ, ում նկատմամբ կարող է կիրառվել քաղաքացիական դատավարության կարգով գույքի բռնագանձման ինստիտուտը:** Այդ սուբյեկտներն (դեպքերն) են՝ .

1) ղեղամիջոցների ապօրինի շրջանառության, թրաֆիքինգի, մարմնավաճառության, փետորիզմի, փողերի լվացման և շորթման համար դատապարտված անձանց;

2) Դատապարտյալի հանցավոր արարքը կազմում է հանցավոր գործունեության մաս:

3) Անձը դատապարտված է հանցագործության համար, որի արդյունքում նա ստացել է 5000 ֆունտ ստեռլինգը գերազանցող օգուտ:

Ինչպես պարզ է դառնում սուբյեկտների վերլուծությունից ՄԹ-ում սույն գործընթացը կարող է կիրառվել միայն արդեն դատապարտված անձանց նկատմամբ, որոնց մեղավորությունը հաստատվել է արդեն աղջամիտ կասկածից վեր ապացուցողական չափանիշով:

Նմանատիպ մոտեցում ունեն նաև Եվրոպական Միությունն ու Եվրոպայի Խորհուրդը: Եվրոպական կոմիտեն Եվրոպայի պառլամենտին և Եվրոպայի Խորհրդին ուղղված իր COM(2008) 766 **հաղորդագրության մեջ արձանագրել է, որ հանցագործությունը չպետք է շահութաբեր լինի և խորհուրդը** **տվել իմպլեմենտացնել քաղաքացիադատարարական կարգով գույքի բռնագանձման գործընթացը՝ միևնույն ժամանակ նշելով նաև անձանց և դեպքերի շրջանակը, ում վրա կարող է տարածվել այն: Այդ երեք հիմնական դեպքերն են՝**

1) Երբ առկա է հիմնավոր կասկած, որ գույքը ձեռք է բերվել հանցավոր գործունեության արդյունքում, **դատապարտված անձի հետ սերտ կապեր ունեցող** գույքի սեփականատերերը չի կարողանում իր եկամուտներով ապացուցել գույքի ձեռք բերումը: Ընդ որում այս դեպքում դատարանում գույքի սեփականատերն է կրում ապացույցների գերակշռման չափանիշով իր օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը ապացուցելու պարտականությունը:

2) Երբ քրեական դատավարության իրականացումն անհնար է մեղադրյալի մահվան, նրա հետախուզման մեջ գտնվելու և այլ պատճառներով:

3) Երբ Սահմանապահ ծառայությունների կողմից հայտնաբերվում է 10,000 Եվրոն գերազանցվող գումար, որը չի հայտարարագրվել անձի կողմից:

Այսպիսով Եվրոպայի Կոմիտեն ևս առանձնացրել է անձանց և դեպքերի շրջանակը, ում գույքի վրա կարող է տարածվել քաղաքացիական դատավարության կարգով բռնագանումը:

**Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի շրջանակներում ապացուցման ենթակա բոլոր փաստերը ապացուցվում են հավանականությունների հավասարակշռման ապացուցողական չափանիշով:**

**Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը կարող է կայացնել վճիռ՝ հիմք ընդունելով գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, եթե գործի քննության արդյունքում հայցվորն ապացուցում է, որ պատասխանողին պատկանող գույքը չի հիմնավորվում հայցվորին հասանելի օրինական եկամտի բոլոր աղբյուրների վերաբերյալ տվյալներով:**

Օրենքով նախատեսված ապացուցողական չափանիշը և ապացուցման բեռի անցումը գույքի սեփականատիրոջը նախադեպը չունի ԵՄ և աշխարհի այլ կայացած իրավական համակարգ ունեցող երկրներում: Այս մոտեցման ընդունման համար հիմք կարող է ծառայած լինել Եվրոպական Կոմիտեի COM(2008) 766 հաղորդագրության մեջ նկարագրված առաջին կետը, սակայն այստեղ առկա է առանցքային տարբերություն: Հաղորդագրության մեջ նկարագրված դեպքում գույքի սեփականատերը սերտ կապի մեջ է գտնվում հանցագործության համար դատապարտված անձի հետ, ով կարող էր հանցագործության կատարման արդյունքում նմանատիպ գույք ձեռք բերելու համար միջոցներ կամ գույք ձեռք բերել և ում մեղավորությունը արդեն հաստատված է ողջամիտ կասկածից վեր բարձր ապացուցողական չափանիշով: Մինչդեռ այսպիսի առանձնահատկություն ՀՀ օրենքում նախատեսված չէ:

Իտալիայում և Շվեյցարիայում գույքի բռնագանձումը թույլատրվում է, եթե դատավճռով հաստատվել է տվյալ գույքի սեփականատիրոջ մասնակցությունը կազմակերպված հանցավորության հետ կապված որևէ հանցագործության կատարմանը, և գույքի սեփականատերը կամ նրա մահվան դեպքում վերջնիս ժառանգները չեն կարողանում ապացուցել այն գույքի օրինական լինելը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ ապացուցման բեռի նման կերպ բաշխումը խնդրահարույց է: Առաջարկում ենք **առնվազն** ընդունել առաջատար միջազգային պրակտիկայում առկա ամենացածր չափանիշը՝ ԱՄՆ-ի օրինակը, որտեղ հայց ներկայացրած պետությունը կողմերի իրավահավասարության պայմաններում՝ ապացույցների գերակշռման չափանիշով կապացուցի, որ գույքն ունի ապօրինի ծագում:

**6. Նախագծով գույքի բռնագանձում կարող է տարածվել նաև էքսպրերիտորիալ հանցագործությունների վրա անգամ այն դեպքերում, երբ Քրեական օրենսգրքով նման պահանջ սահմանված չէ:**

**Քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածով** սահմանված են այն հանցագործությունները, որոնց փաստով ՀՀ-ն իրավունք ունի իրականացնել քրեական հետապնդման լիազորություն: Նախագծի տրամաբանությամբ ստացվում է, որ ՀՀ-ի կողմից բռնագանձում կարող է տարածվել այնպիսի ենթադրյալ հանցավոր արարքների արդյունքում կամ դրա հետ կապված գույքի վրա, որոնց դեպքերով ՀՀ-ն չունի քրեական հետապնդման իրավասություն: Արդյունքում գույքի վրա կարող է տարածվել բռնագանձում՝ առանց դրա համար բավարար իրավական հիմքերի:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ հնարավոր է, որ արտերկրում պատիժ չկրած անձի նկատմամբ նշված օրենքի շրջանակներում օտարերկրյա պետությունը կարող է դիմել և առանց քրեական գործ հարուցելու պահանջել, որ ՀՀ-ն ուսումնասիրի նրա գույքի ապօրինի ծագումը և գույքը բռնագանձելու դեպքում վերադարձնի այդ գույքը օտարերկրյա պետությանը: Նախագծից դուրս բոլոր միջազգային կարգավորումները և պայմանագրերը թող գործեն իրենց ծավալներով: Եթե որևէ երկիր նման ժամկետներով ՀՀ-ին գույքի և բռնագանձումների մասով Նախագծին համահունչ պաշտպանություն է տալիս, այդ երկրի հետ կարելի է միջազգային պայմանագրով երկկողմանի ընդունել սույն օրենքի կիրառությունը և այդ մասը կարգավորել միջազգային պայմանագրով:

**Համակարգող՝ Թաթուլ Խուդատյան**

**Անդամ՝ Արտաշես Խալաթյան**